Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 23-ի N 825 - Ա
որոշման

«ԱՐՁԱԳԱՆՔ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԺԱՄԱՆԱԾ ԱՆՁԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Աջակցություն Լեռնային Ղարաբաղից ժամանած անձանց սոցիալական խնդիրներին՝ ապահովելով սննդի, հիգիենիկ և կենցաղային իրերի, ինչպես նաև առողջությանը նպաստող իրերի հասանելիությունը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Գերմանական Կարմիր խաչ ք. Բեռլին, Կարցեն 58: հեռ. + (49) (30) 85404-0
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևան և ՀՀ մարզեր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	112,063,446 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	10,119 Լեռնային Ղարաբաղից ժամանած անձիք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01. 12. 2020 թ. – 31.12. 2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Հումանիտար աջակցության տրամադրում Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած և ժամանակավոր կացարաններում բնակվող բնակչության սոցիալապես անապահով անձանց, ինչը ներառում է հիգիենիկ, կենցաղային պարագաների ձեռքբերում, տեսակավորում, փաթեթավորում, բեռնափոխադրում և բաշխում: Ժամանակահատված՝ 1 դեկտեմբերի 2020 թ. - 30 դեկտեմբերի 2020 թ. Բյուջե 105,035,562 դրամ

		2. Հաշմանդամություն ունեցող անձնաց համար շարունակությունն ապահովող ապրանքների /անվասայլակներ, քայլակներ, ձեռնափայտեր/ գնում և տրամադրում: Ժամանակահատված՝ 1 դեկտեմբերի 2020 թ. - 30 դեկտեմբերի 2020 թ. Բյուջե՝ 4,948,020 դրամ 3. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 2,079,864 ինչը ներառում է ծրագրի անձնակազմի և ծրագրով սահմանված աշխատուժի աշխատավարձեր՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ և վառելիքի ձեռքբերում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Սննդային ապրանքների ձեռքբերում՝ 51,678,000 դրամ արժողությամբ 2. Հիգիենիկ և կենցաղային պարագաների ձեռքբերում՝ 50,473,962 դրամ արժողությամբ 3. Շարժունակությունն ապահովող սարքերի ձեռքբերում՝ 4,948,020 դրամ 4. Բեռնատար մեքենաների վարձակալության և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում ՝ 1,500,000 դրամ արժողությամբ 5. Բենզինի ձեռքբերում ՀԿԽԸ մեքենաների համար՝ 495,000 դրամ արժողությամբ: 6. Ծրագրի համակարգման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի ձեռք բերում՝ 600,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 2,079,864 դրամ, ինչը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 942,084 դրամ արժողությամբ, ծրագրով սահմանված բանվորական աշխատուժի վճարները՝ 642,780 դրամ արժողությամբ, և վառելիքի ձեռքբերում՝ 495,000 դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնա-կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և քաղաքապետարանների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ավարտական հաշվետվություն Գերմանական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուի կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության

		անմիջական վերահսկում: Ինչպես նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ